ԿՈՌՈՒՊՑԻԱՑԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 1/2026/Շ/Վ

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՑԹ ԴԵՊՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՑԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 9 հուլիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի հուլիսի 2-ին «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) նախագահ Գևորգ Քոթանջյանի (այսուհետ՝ նաև Դիմող) կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումը (այսուհետ՝ նաև Դիմում) և դրա հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքները.

ՊԱՐԶԵՑ

1. Ըստ Դիմումով ներկայացված տեղեկատվության՝

1.1 «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպության (Կազմակերպության) կողմից իրականացվող տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների մշտադիտարկման շրջանակներում ի հայտ է եկել Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հայկ Սիսակյանի կողմից շահերի բախման կանոնների առերևույթ խախտման դեպք: Մասնավորապես՝

ա. 2023 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին» թիվ 115-Ա որոշումը: Նշված որոշման հավելվածում ներառված է եղել ավագանու անդամ Հայկ Սիսակյանի եղբոր՝ Գրիգոր Զաքարի Սիսակյանի անունը:

Հայկ Սիսակյանը մասնակցել է ավագանու նիստին և քվեարկել «կողմ»:

բ. Հետագայում, հիմք ընդունելով ավագանու վերոնշյալ որոշումը, 2026 թվականի հունիսի 25-ին Սպիտակ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ [redacted] բնակարանը նվիրատվությամբ (ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով) փոխանցվել է Գրիգոր Զաքարի Սիսակյանի ընտանիքին:

1.2 Կազմակերպությունն ուսումնասիրել է նաև Հայկ Սիսակյանի տարեկան հայտարարագիրը, որտեղից պարզվել է, որ նա աշխատել է «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ-ում:

1.3 Ըստ Դիմողի՝ Հայկ Սիսակյանը, «կողմ» քվեարկելով համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվությամբ իր հարազատ եղբորը փոխանցելու որոշմանը, ուղղակիորեն խախտել է շահերի բախման առնչվող դրույթները: Դեռևս համայնքի ավագանու որոշման ընդունման փուլում պարզ է եղել, թե ում են հատկացվելու բնակարանները: Հայկ Սիսակյանն առհասարակ իրավունք չուներ մասնակցելու այդ հարցի քննարկմանը: Բացի այդ, աշխատելով «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ-ում, հետևաբար, ողջամտորեն մասնակցել է նաև որոշման ընդունման նախապատրաստական աշխատանքներին:

1.4 Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրել է՝

ա. Սպիտակ համայնքի ավագանու անդամ Հայկ Սիսակյանի նկատմամբ հարուցել վարույթ՝ շահերի բախման կանոնների վերաբերյալ օրենսդրական պահանջների խախտման փաստը քննելու նպատակով,

բ. եզրակացություն ուղարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ վերջինիս լիազորությունների շրջանակում իրավական հսկողություն իրականացնելու և փաստերի առնչությամբ միջոցներ ձեռնարկելու համար,

գ. արդյունքների մասին տեղեկացնել Կազմակերպությանը:

2. Դիմումի ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական հանգամանքները, կիրառելի օրենսդրական կարգավորումները և դրանց հիմքով վարույթի հարուցումը մերժելու հիմնավորումները.

2.1 Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջի տվյալների համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած ընտրություններին Հայկ Սիսակյանը մասնակցել և ընտրվել է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ Համայնքի ավագանու անդամ:

2.2 Սպիտակի համայնքապետարանի կայքէջի և հայտարարագրման էլեկտրոնային համակարգի տվյալների համաձայն՝ Հայկ Սիսակյանը պաշտոնավարում է որպես ավագանու անդամ:

2.3 ՊԵԿ տվյալների շտեմարանի համաձայն՝ Հայկ Սիսակյանը 27.09.2023-31.10.2025թթ. ընկած ժամանակահատվածում աշխատել է «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ», 10.11.2025-27.02.2026թթ. ընկած ժամանակահատվածում՝ «Սպիտակի բնակարանների և կոմունալ

սպասարկում», իսկ 2026 թվականի մարտի 2-ից՝ «Սպիտակ համայնքի ավտոպարկ և ենթակառուցվածքների սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (հիմնադիր՝ Սպիտակ համայնք)՝ որպես տնտեսվար:

2.4 Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու **միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով**:

2.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը:

2.6 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (...) կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: (...)»:

2.7 Օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(...)

2. Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների

ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: (...)»:

2.8 Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

(...):»:

2.9 «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝

«1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

2. Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

3. Իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ որոշումը կամ գործողությունը (անգործությունը) ուղղված է ապահովելու արտոնություն պաշտոն զբաղեցնող անձի, նրա հետ փոխկապակցված անձի կամ վերջիններիս անդամակցած առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար:»:

2.10 Նույն հոդվածի 12-րդ մասի համաձայն՝

«12. Սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա:

Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի վրա սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը չեն տարածվում:»

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավական կարգավորումները՝ պարզ է դառնում, որ համայնքի ավագանու անդամների վերաբերյալ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում Հանձնաժողովը չունի լիազորություն հարուցելու Օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված վարույթ, ուստի Դիմումով բարձրացված հարցը դուրս է Հանձնաժողովի լիազորություններից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ անհրաժեշտ է մերժել Դիմումի հիման վրա վարույթի հարուցումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դիմումում բարձրացված հարցը դուրս է Հանձնաժողովի իրավասությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպության նախագահ Գևորգ Քոթանջյանի 2026 թվականի հուլիսի 2-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումն ուղարկել «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպության նախագահ Գևորգ Քոթանջյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ